ՏԵՂԵԿԱՆՔ
ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ»

Հոդված 5. Ինկասացիոն կազմակերպության լիցենզավորումը, ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության և հատուկ պատրաստության ստուգումների կարգերը

1. Ինկասացիոն կազմակերպության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կառավարության սահմանած կարգով:
2. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը սահմանվում է «Լիցենզավորման մասին», ~~«Զենքի մասին»~~ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և կառավարության սահմանած լիցենզավորման կարգով, որը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հետ:
3. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականը տրվում է անժամկետ:
4. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցներն անցնում են նաև հատուկ պատրաստության ստուգումներ, որոնց անցկացման կարգը և պայմանները սահմանվում են ~~«Զենքի մասին»~~ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:
(5-րդ հոդվածը խմբ. 28.09.16 ՀՕ-139-Ն)

Հոդված 6. Ինկասացիոն գործունեության նկատմամբ վերահսկողությունը

Ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիայի պահանջների կամ պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կառավարության լիազորած մարմինը՝ ~~«Զենքի մասին»~~ «Զենքի շրջանառության կարգավորման մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով: